

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ՓՎ/44-2022

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱԶՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ԲԱՂԱԲԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

- | | |
|-----------------|--|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Հ. Սիմիդյան | ՀՀ շրջակա միջավայրի նախարար |
| Լ. Հովհաննիսյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Բ. Բաղայան | ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Զ. Ղալեյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ |
| Ե. Թումանյանց | ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Ա. Իսախիրյան | ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ա. Գուգարաց | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ |
| Վ. Դավթյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի ղեկավար |
| Ն. Պետրոսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական |
| Ա. Սարգսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական |
| Լ. Մարտիրոսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղար |
| Ն. Մարտիրոսյան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ - ծրագրի ղեկավար |
| Գ. Ավետիսյան | «Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն |

Ն. Չուվայան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի փոխտնօրեն/Ծրագրերի կառավարման և գնումների դեպարտամենտի պետ
Ա. Դարբինյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի մասնագետ

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Տրանշ 2-ի շրջանակներում իրականացվող ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող մոտ 8 կմ հատվածի (կմ31+300-կմ33+560) հողամասերի կադաստրային անճշտությունների մասին

(Նարեկ Չուվայան, Քրիստինե Ղալեյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Չեկույցն ընդունելի գիտություն, հաշվի առնելով, որ հարցը կարգավորվել է կառավարության 2022 թ. մայիսի 5-ի թիվ 622-Ն որոշմամբ:

2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրեն Գ. Ավետիսյանին՝ վերոհիշյալ որոշման շրջանակներում հանրության գերակա շահ նանաչված տարածքների օտարման գործընթացի արդյունքները ներկայացնել Խորհրդին:

3. ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահ Սուրեն Թովմասյանին՝ ծրագրի իրականացման շրջանակներում առաջացած խնդրի կարգավորման գործընթացում սերտորեն համագործակցել և հնարավորինս աջակցել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին:

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի փոփոխման կարգադրագիր թիվ 7-ի մասին

(Նարեկ Չուվայան, Քրիստինե Ղալեյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի

3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի փոփոխման կարգադրագիր թիվ 7-ը:

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ «Սաֆեժ ՍԱՍ և Հիլ Ինթերնեյշնլ Էն.Վի.» համատեղ գործող ընկերության հետ սահմանված կարգով ստորագրել 2018 թվականի ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 պայմանագրի փոփոխման կարգադրագիր թիվ 7-ը և N 7 համաձայնագիրը:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Տրանշ 3-ի շրջանակներում թիվ T3-CW-01 պայմանագրի շրջանակներում կապալառու ընկերության կողմից Վեճերի միանձնյա խորհուրդ ներկայացված թիվ 3 դիմումի մասին

(Նարեկ Չուպայան, Քրիստինե Ղալեյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի, Տրանշ 3 (Թալին-Լանջիկ հատված) շրջանակներում կնքված թիվ T3-CW-01 պայմանագրի շրջանակներում կապալառու ընկերության կողմից Վեճերի լուծման միանձնյա խորհուրդ ներկայացված դիմումի և դրա արդյունքում կայացված որոշման վերաբերյալ ներկայացված զեկույցը:

2. Ընդունել ի գիտություն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի, Տրանշ 3 (Թալին-Լանջիկ հատված) շրջանակներում կնքված թիվ T3-CW-01 պայմանագրի շրջանակներում պատվիրատուի կողմից 488,510.62 ԱՄՆ-ի դոլարի վճարում կատարելու պարտականությունը:

3. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրեն Գ.Ավետիսյանին՝ ա) միջոցներ ձեռնարկել կապալառուի հետ վեճը բանակցային եղանակով կարգավորելու ուղղությամբ և արդյունքները ներկայացնել Կառավարման խորհրդի դիտարկմանը:

բ) Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի հետ համատեղ քննարկել հաշտարարության ծառայություններ մատուցող միջազգային կենտրոնների կանոնների կիրառմամբ վեճը լուծելու հնարավորությունը և ներկայացնել առաջարկություններ, միաժամանակ տրամադրելով տեղեկատվություն՝ ծառայությունների արժեքների և համապատասխան փորձ ունեցող հաշտարարների թեկնածությունների վերաբերյալ:

4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017 թվականի նոյեմբերի 30-ին «Սուարդի» բաժնետիրական ընկերության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-3 պայմանագրի N 3 փոփոխման հրահանգի մասին

(Նարեկ Չուլայան, Քրիստինե Ղալեյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017 թվականի նոյեմբերի 30-ին «Սուարդի» բաժնետիրական ընկերության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-3 պայմանագրի N 3 փոփոխման հրահանգը՝ պայմանով, որ Կառավարման խորհրդին ներկայացվեն Ծրագրի Ինժեների հիմնավորումները առաջադրված տեխնիկական լուծումների և ֆինանսական պայմանների վերաբերյալ:

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ «Սուարդի» բաժնետիրական ընկերության հետ սահմանված կարգով ստորագրել 2017 թվականի նոյեմբերի 30-ին կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրի N 3 փոփոխման հրահանգը:

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Հ Ա Ր Ց

5. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր–Տրանշ 2-ի շրջանակներում Մ1 Երևան-Գյումրի-Բավրա կմ37+545 մինչև կմ71+435 (մոտ 34 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մրցութային փաստաթղթերի հաստատման մասին

(Նարեկ Չուլայան, Քրիստինե Ղալեյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Հաստատել Մ1 Երևան-Գյումրի-Բավրա կմ37+545 մինչև կմ71+435 (մոտ 34 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթը՝ պայմանով, որ ԱԶԲ-ի կողմից մրցութային փաթեթի վերաբերյալ համապատասխան հաստատումներն ստանալուց անմիջապես հետո կնախաձեռնվի մրցութային գործընթաց:

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանին՝ ԱԶԲ-ի կողմից մրցութային փաթեթի վերաբերյալ հաստատումն ստանալուց հետո մեկնարկել Մ1 Երևան-Գյումրի-Բավրա կմ37+545 մինչև կմ71+435 (մոտ 34 կմ) ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային

գործընթաց և դրա կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել
Կառավարման խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԳԵՏ

ՀԱՄԱԲՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ